

**ՀԻՄՆՈՒՄՆԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ**  
**ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ**  
**ԱՇԽԱՏԱՆԻՍՏԸ ԳՈՒՓԸՐԹԻՆՈՅԻ ՍՈՒՐԲ ԱՆԴՐԵԱՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**

Առաջնորդարանի Երիտասարդաց Վարիչ՝ Արժ. Տ. Ալետիս Քհնյ. Աբովեան, մասնակցութեամբ ՀԵԵԿ Կեդրոնական Խորհուրդի Ատենապետ՝ Անի Խաչատուրեանի, Փոխ Ատենապետ՝ Ռաֆֆի Փոսթալճեանի եւ Գանձապահ՝ Էլիզապէթ Օլկընի, Շաբաթ, Յունուար 23ին Գուլիըրթինոյի Սուրբ Անդրեաս Հայց. Եկեղեցւոյ աշխատանիստ մը ունեցան հիւրընկալ եկեղեցւոյ, Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. Եկեղեցւոյ եւ Օգլընտի Սուրբ Վարդան Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդ Կազմակերպութեան Վարչական Մարմիններուն եւ անդամներուն հետ: Աշխատանիստին մասնակցեցան նաեւ յիշեալ եկեղեցիներու Հոգեւոր Հովիւները՝ Արժ. Տ. Տաթեւ Քհնյ. Յարութիւնեան, Արժ. Տ. Տիրան Քհնյ. Աւագեան եւ Արժ. Տ. Յովէլ Քհնյ. Օհանեան:

Արժ. Տ. Ալետիս Քհնյ. Աբովեան Երիտասարդութեան խօսեցաւ ապագայի նկատմամբ «Տեսիլք» ունենալու կարելորութեան եւ յաջողութիւններ արձանագրելու կապակցութեամբ: Կեդրոնական Խորհուրդի վերոյիշեալ ներկայացուցիչները մասնակից երեք եկեղեցիներու ՀԵԵԿ 2010 տարուան ընդհանուր ծրագիրները պատրաստելու նպատակով, իւրաքանչիւրը իր շուրջը հաւաքեց եկեղեցւոյ Երիտասարդութիւնը եւ անոնց հետ մշակեց տուեալ Ծուխի Երիտասարդաց Կազմակերպութեան այս տարուան ծրագիրը:

Կիրակի, Յունուար 24ին Սուրբ Անդրեաս Հայց. Եկեղեցւոյ մէջ Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց Ծուխին Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Տաթեւ Քհնյ. Յարութիւնեան: Արժ. Տ. Ալետիս Քհնյ. Աբովեան, Կեդրոնական Խորհուրդի ներկայացուցիչները եւ Երիտասարդաց Կազմակերպութեան անդամները ներկայ գտնուեցան Սուրբ Պատարագի արարողութեան: